ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

1112/34987-20
29.12.2020

[redacted]

Մուշեղ Հովսեփյանին

Հարգելի՛ պարոն Հովսեփյան,

Ի պատասխան Ձեր հարցման (ԱԳՆ մուտքագրվել է դեկտեմբերի 23-ին)՝ հայտնում ենք, որ յուրաքանչյուր տարի տեղի են ունենում ընտրություններ ՄԱԿ-ի մասնագիտական գործակալություններում, հիմնադրամներում, ծրագրերում, մի շարք այլ մարմիններում ինչպես նաև՝ միջազգային տարբեր կառույցներում, որոնց Հայաստանն իր մասնակցությունն է ունենում՝ աջակցելով տարբեր երկրներին կամ ներկայացնելով սեփական թեկնածությունը: Ընտրություններին ներկայացվում են կա՛մ երկրի, կա՛մ երկիրը ներկայացնող անհատի թեկնածությունը:

Անցած տարիներին տարբեր մարմիններում Հայաստանը ներկայացրել է մի շարք անհատների թեկնածություններ, ինչպես օրինակ՝ 2016թ. Գյուլնարա Շահինյանին՝ Եվրոպայի խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խմբի (ընտրվել է), 2017թ. Արման Թաթոյանին՝ ՄԱԿ-ի Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի կոմիտեի (չի ընտրվել), 2018թ. Ալվինա Գյուլումյանին՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի (չի ընտրվել), 2019թ. Թաթուլ Հակոբյանին՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական տրածաշրջանի գլխավոր տնօրենի պաշտոնի (չի ընտրվել) և 2020թ. Սերգեյ Ղազինյանին՝ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խմբի (ընտրվել է) ընտրություններում:

Հայաստանը տարբեր տարիներին ընտրվել է ՄԱԿ-ի և այլ կառույցների մարմիններում: Մասնավորապես՝ 2019թ. Հայաստանն ընտրվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի, 2018թ.՝ ՄԱԿ-ի Տնտեսական և Սոցիալական խորհրդի, 2014թ.՝ ՄԱԿ-ի Խոշտանգումների և այլ դաժան անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթակոմիտեի, 2016թ.՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության կոմիտեի, 2013 և 2017թթ.՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության կոմիտեի, 2018թ.՝ ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի (ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչն ընտրվել է նույն հանձնաժողովի նախագահ) և 2020թ. սեպտեմբերին՝ ՄԱԿ-ի ծրագրման և համակարգման կոմիտեի անդամ:

Ներկայումս Հայաստանն իր թեկնածությունն է ներկայացրել մի շարք միջազգային կազմակերպություններում ընտրվելու համար, այդ թվում՝ ՄԱԿ-ի ԱԽ ոչ մշտական անդամի ընտրություններում՝ 2032-2033թթ. ժամանակահատվածի համար, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործադիր խորհրդում և այլն: Որպես անհատ թեկնածու

www.mfa.am
Կառավարական տուն 2, Վազգեն Սարգսյան 3, Երևան 0010: Հեռ. +374 60 620000, Ֆաքս +374 60 620062
Government House 2, 3 Vazgen Sargsyan str., 0010 Yerevan, Tel: +374 60 620000, Fax: +374 60 620062, E-mail: info@mfa.am

ներկայացվել է Վիգեն Քոչարյանի թեկնածությունը՝ 2021թ. Նյու Յորքում կայանալիք ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովի ընտրություններում՝ 2023-2027թթ. ժամանակահատվածի համար:

Միջազգային կառույցներում առաջադրումների թեմայով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ խորհրդակցություններ անցկացվում են ըստ անհրաժեշտության:

Ընդհանուր առմամբ, ընտրություններին մասնակցելը բարդ և ժամանակատար գործընթաց է, որը պահանջում է մեծածավալ ռեսուրսներ (դիվանագիտական, վարչական, ֆինանսական և այլն)՝ միջազգային ընտրարշավ կազմակերպելու և անհրաժեշտ ձայներ ձեռք բերելու համար, ընդ որում, ընտրություններում հաղթելու համար անհրաժեշտ է ՄԱԿ-ի անդամ երկրների ձայների առնվազն կեսի աջակցությունը (97 ձայն): Անհատ թեկնածուների պարագայում անհրաժեշտ է նաև միջազգայնորեն մրցունակ, պահանջվող որակավում ունեցող, արհեստավարժ հմտություններով և փորձառությամբ օժտված թեկնածուներ: Այս պատճառով է, որ թեկնածությունները ներկայացնելու առաջնորդող սկզբունքներից է խիստ ընտրողաբար մոտեցումը, երբ հաշվի են առնվում տվյալ մարմնի կարևորությունը, մրցակցության առկայությունը, հաղթելու հավանականությունը, իսկ անհատ թեկնածուների դեպքում՝ նաև անձնական որակավորումները:

Հարգանքով՝

[redacted]

Սերոբ Բեջանյան
Լրատվության և հանրային դիվանագիտության
վարչության պետ

Լրատվամիջոցների հետ կապի և
հանրային դիվանագիտության բաժին
հեռ.՝ 060 620 202